

# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ

ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՕԹԵՐՈՌԴ

ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ


ԵՒ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՍՄԱՆԻ

## ՏԵՂԵԿԱԳԻՐ



ԱՊՐԻլ 15, 1935



ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴԻՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՕԹԵՐՈՌԴ

ՊԱՏԳԱՄԱԿՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Գումարեալ

Ի Պօստըն Սեպտ. 23, 1934, Կիրակի

Կէսօրէ Վերջ Ժամը 2-ին

Համա-Խարբերդցիական Միութեան Եօթներորդ Պատգամաւորական Ժողովը տեղի ունեցաւ Սեպտ. 23, 1934, Կիրակի  
**296½ Shawmut Ave., Boston Պայքարի շնչքին մէջ:**

Պատգամաւորներու ցանկը Հետեւեալն էր.

ԿԵԴՐ. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԻ ԿՈՂՄԵՆ՝

1. Մարտիրոս Տէր Յովհաննէսեան

2. Մաղաք Պերպէրեան

3. Յարուբիւն Խոլիկեան

ՊՕՍՏԸՆԻ Մ.-ՃԻՒՊԵՆ.—

1. Տօփր. Մ. Կ. Սրապեան

2. Յակոբ Բարեզաննէան

3. Գէորգ Կիւլխասնան

ՆԻՒ ԵՕԹԻ Մ.-ՃԻՒՊԵՆ.—

1. Յովհաննէս Վագասեան

2. Սմբատ Վարդապետեան

Լ.ՕԶ ԱՆՃԵԼԸՆԻ Մ.-ՃԻՒՊԵՆ.—

1. Միհրան Կօշկարեան

2. Ստեփան Տիննեան

ՇԵՔԱԿՈՒ Մ.-ՃԻՒՊԵՆ (Կեդրոնի ձայն տուած էր) —

1. Հերքի Յետիցեան

ՈՒՕՔԵԿԲՆԻ Մ.-ՃԻՒՊԵՆ (Կեդրոնի ձայն տուած էր) —

1. Յովհաննէս Աւագեան

ՑՐԵԶՆՈՒ Մ.-ՃԻՒՊԵՆ

1. Գէորգ Կիւլխասեան

2. Գէորգ Խոլիկեան

31.05.2013

42.872

1 MAR 2010

### ՕՐԱԿԱՐԳ

ՊՈՍՏԸՆԻ ՃԻՒՆԻԲԸ ԼԻԿԵՆ.—

- 1.- Պետքոս Կիւլխասեան
- 2.- Պետքոս Առաքելեան

ԽԱՐԲԵՐԴԻ ԿՐԹԱԾԻՐԱՑԵՆ.—

- 1.- Սահակ Ասատուրեան
- 2.- Յակոբ Միխնեան

ՀԻՒՍԵՑՆԻԿԻ ՎԵՐԱՇԽՆԱՑԵՆ.—

- 1.- Մելիքոն Ռատիկեան
- 2.- Նշան Յովսէփեան

ՔԵՍԻՐԻԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵՆԵՆ.—

- 1.- Յակոբ Ճօրմօրեան
- 2.- Յարութիւն Գաաապեան

ԲԱԶՄԱՆԵՆԻ ԼՈՒՍ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑԻ ԿՈՂՄԵՆ.—

- 1.- Սեդրակ Հէֆիմեան
- 2.- Պետքոս Մալխասեան

ՓԵՐՁԷՆՃԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ ԸՆԿ. ԿՈՂՄԵՆ.—

- 1.- Սարգիս Թօրիկեան
- 2.- Խաչատուր Քիլէրեան

ԻԶՄԵՒ ՄԻԱՑԵԱԼ ՈՒՍՄ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵՆ.—

- 1.- Յարէր Փիլիպոսեան
- 2.- Յովհաննէս Նահիկեան

ԱՐՓԱՌԻՏԻ ՎԵՐԱՇԽՆԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵՆ.—

- 1.- Ղուկաս Արօնեան

ՄԵԾԿԵՐՏԻ ՈՒՍՄ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵՆ.—

- 1.- Պ. Դարբինեան

✓ Այս Պատգամաւորական Ժողովէն կը բացակայէին Ուսուր, Լիոն, Մէքսիքո Միթի և Քօրտուրայի Մասնաճիւղերը: Նոյնպէս Բացակայ էին Հետեւեալ Միութիւնները: Հողէն Միացեալ Ուսումնասիրաց Ընկերութիւնը, Մորենիկի Ուսումնասիրաց Ընկերութիւնը, Խուզապիլի Յագէթ Յակոբ Գրադարանի Միութիւնը: Կեղունական Գործադիր Մարմինը իր ամբողջ կազմով, նոյնպէս Միութեան Պատուոյ Անդամ Մարդիկ Կօշկարեան և ուրիշ Հետաքրքիր Խարբերդցիներ ներկայ էին:



618-85

- 1.- Յանձնարարականներու վաւերացում:
- 2.- Օրուան դիւանի ընտրութիւն:
- 3.- Նախորդ ժողովի արձանագրութեան ընթերցում:
- 4.- Կեղծ. Գործ. Մարմնոյ Տարեկան Տեղեկագիրը:
- 5.- Յանձնախումբերու ընտրութիւն — հաշուեքննիչ, հարցեր դասաւորող եւ ընտրական
- 6.- Գանձապահին հաշիւը:
- 7.- Մասնաճիւղերու տարեկան տեղեկագիրը:
- 8.- Արուարձանային Մասնաճիւղերու կազմութիւն:
- 9.- Գործիչի հարց, որ փրոփականտի մէկ կերպն է:
- 10.- Կանանց մասնաճիւղերու կազմութիւն:
- 11.- 200-300 Խարբերդցիներ Խորհրդային Հայաստան փոխադրելու հարց:
- 12.- Նոր մասնաճիւղեր կազմելու հարց:
- 13.- Քաղիփորնիոյ ըրջանի կազմութեան հարց:
- 14.- 12,000 տոլարի Քէմբէյնի հարց:

### ՆԻԱՏ Ա.

1.- ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԱԿԵՐԱՑՈՒՄ

Միութեանս Ատենապետ Տօքթ. Յ. Ծովիկեան ժողովը բացաւ մի քանի հակիրճ բառերով, — եւ անցաւ օրակարգի հարցերուն:

Պատգամաւորներու յանձնարարականները քննուելէ վերջ վաւերացուեցան: Ֆրէզնօի ներկայացուցիչներէն Գէորգ Կիւլխասեան Պոստընի Մասնաճիւղէն ալ պատգամաւոր ընտրուած ըլլալուն համար ձայնը արուեցաւ Յարութիւն Սողիկեանի: Խակ Գէորգ Խոլիկեան քաղաքէն բացակայ ըլլալուն՝ ձայնը արուեցաւ Ղաղար Մրապեանի:

2.- ՕՐՈՒԱՆ ԴԻՒԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Գաղտնի քուէով Մելքօն Ռստիկեան ընտրուեցաւ Ատենապետ և Գէորգ Կիւլխասեան Ատենապետի: Մելքօն Ռստիկեան մի քանի հակիրճ բառերով իւր չնորհակալութիւնը յայտնելէ վերջ անցաւ օրակարգին:

3.- ՆԱԽՈՐԴ. ՊԱՏԳԱՄԱՀԱՌՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Նախորդ Պատգամաւորական Ժողովի արձանագրութիւնը  
կարգացուեցաւ առ ի գիտութիւն։

4.- ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԻ

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Կեդրոնական Գործադիր Մարմնոյ Ատենադպիրը Պ. Յա-  
րէթ Փիլիպպոսեան կարգաց խնամով պատրաստուած Միո-  
թեան տարեկան տեղեկագիրը։ Այլեւայլ գիտողութիւններէ  
և բացատրութիւններէ վերջ տեղեկագրի զնահատումը թող-  
ուեցաւ յաջորդ նիստին։

Գանձապահ Պըն. Յարութիւն Խօլիկեանի կողմէ պատ-  
րաստուած 1933 Մարտ 20-էն մինչեւ 1934 Սեպտ. 22 տասն-  
եւութը ամսուան հաշուեցուցակը տպագրուած ըլլալով՝ ցըր-  
ուեցաւ ներկաներուն։

Հաշուեցուցակին վաւերացումը թողուեցաւ յաջորդ ժո-  
ղովին։

Պատգամաւորական Ժողովին զրկուած էր 1700 տոլար  
հետեւեալներու կողմէ։

Պօստընի Մասնաճիւղէն 600 տոլար

Քէսիրիկի Բնդէ. Միութենէն 500 »

Հիւսէյնիկի Վերաշինացէն 400 »

Բազմաչնի Լուս. Ռւսմ. Միութենէն 200 »



ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՑԻԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԿԵԴՐ. ԳՈՐԾ. ՄԱՐՄԻՆԻ ՀԱՇՈՒԵԿՇԻՌԸ  
Մարտ 20, 1933-էն Սեպտ. 22, 1934  
Տասնեւութը Ամիսներու

ՄՈՒՏՔ	ԵԼՔ
Նախորդ Հրչանէն փոխանց-	Հայաստան զրկուած . . . . . 2,150.50
ուած . . . . .	438.73
Ընկերութիւններէ	Տիկ. Սաթ. Յովհաննէս-
Հող . . . . .	Հանի . . . . . 142.50
Հող . . . . .	Փոխաստութիւն . . . . . 120.00
Հող . . . . .	Քարտուղարութեան . . . . . 485.00
Հող . . . . .	Ճամբորդութիւն . . . . . 113.99
Հող . . . . .	Տպագրութիւն . . . . . 227.57
Հող . . . . .	Մարդութիւն . . . . . 113.99
Հող . . . . .	Բղդասարութեան . . . . . 33.56
Հող . . . . .	Գործիչ . . . . . 135.00
Հող . . . . .	Սրահի վարձք . . . . . 21.00
Հող . . . . .	Այլեւայլք . . . . . 35.93
Հող . . . . .	Համագումար 3,579.04
Հող . . . . .	Կըսա 2,409.32
	5,988.36
Վասնանիդերէ	1,275.13
Պոստոն . . . . .	Փոխան ծագկապատկի . . . . . 439.00
	Խողովակներու համար
	Լոզ Անձէլըսէ 104.78
	Անհատներէ . . . . . 11.25
	116.03 Խանցուածը և 120 տոլար փոխա- տրութիւնը կունենանք
	Զուտ եկամուտ 5,429.88
	122.00 Ելքի կողմէն եթէ հանելու ըլլանը Հայաստան զրկուածը, փոխաստ-
	ութիւնը և Տիկ. Սաթնիկ Յով-
	հաննէսեանի արուածները կունե-
	նանք
	Զուտ Մաթիք 1,166.04
	5,988.36

Սեպտ. 22, 1934

ՅԱՐԱՒԹԻՒՆ ԽՈԼԻԿԵԱՆ, Գանձապահ

## ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Աթոռին իրաւունք տրուեցաւ նշանակելու Յանձնախումբ-բեր.

Հաշումքննիչ Յանձնախումբ.—

- 1.- Նշան Յովսէփեան
- 2.- Յակոբ Ճօրճօրեան
- 3.- Միհրան Կոչկարեան

Բնտրական Յանձնախումբ.—

- 1.- Սմբատ Վարդապետեան
- 2.- Ղազար Սրապեան
- 3.- Պետրոս Մալխասեան

Հարցեր Դասաւորող Յանձնախումբ.—

- 1.- Տօքթ. Մ. Կ. Սրապեան
- 2.- Յակոբ Բարեջանեան
- 3.- Սահակ Աստուրեան

## ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒ ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐԸ

Փաստընի Մասնաճիւղէն խօսեցաւ Տօքթ. Մ. Կ. Սրապեան, որուն գործունէութիւնը գնահատուեցաւ ծափահարութեամբ:

Նիւ Եօրքի Մասնաճիւղէն խօսեցաւ Յովհաննէս Վագասեան. Մասնաճիւղը նոր գործի սկսած է, եւ մի քանի ձեռնարկներ տուած է, որոնց արդիւնքը 200 տոլարի չափ ըլլալով խոստացան շուտով կեղրոն զրկել: Նիւ Եօրքիներու գործունէութիւնը գնահատելի էր:

Ուստի Մասնաճիւղը կը բացակայէր. բայց Մաղաք Պէրպէրեանի կողմէն տեղեկութիւն տրուեցաւ առ ի գիտութիւն: Մեծ աշխատանքի լծուած են եւ դիմում ըրած են տեղական օժանդակ մարմիններու որոնք իրենց աշխատանքը բերել խոստացած են:

Նիշակօի եւ Ուօքէկընի Մասնաճիւղներու կողմէն մաս մը բացատրութիւններ տրուեցաւ Յարէթ Փիլիպպոսեանի կողմէն, մեծ աշխատանք եւ գործունէութիւն կ'ակնկալուի գալիք ըլլաջանին:

Քալիֆորնիոյ շրջանը.— Այս տարի բեղուն գործունէութիւն մը ցոյց տուած է, սակայն իրենց զրկած քաջալերական նամակէն կը հասկցուի որ եթէ կեղր, Գործ. Մարմինը գրութենական աշխատանքի լծուի, չատ լաւ արդիւնք կրնանք ձեռք բերել:

## ՕԺԱՐԴԱԿՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԵԿՈՅՑՑՆԵՐ

Փրավիտէնսէն Խարբերդի Կրթասիրացի կողմէն խօսեցաւ Յակոբ Միմեան: Իրենց հաւաքած գրամին 50%-ը կը տրամադրեն Միութեանս, որը խիստ գնահատելի էր:

Իջմէի Միացեալ Ուսմ. Ընկերութեան կողմէ խօսեցաւ Յարէթ Փիլիպպոսեան:

Հիսէյնիկի Վերաշինաց Միութեան կողմէ խօսեցաւ Նըշն Յովսէփեան:

Քէսիրիկի Ընդհանուր Միութեան կողմէ խօսեցաւ Յարութիւն Գասապեան:

Քազմաշշնի Ուսումնասիրացի կողմէն խօսեցաւ Սեղբակ Հէքիմեան եւ խոստացաւ գալիքին մեր ակնկալածէն աւելի դրամ տալ Միութեանս նպատակին համար:

Քէրչէնի Ուսումնասիրաց Ընկերութեան կողմէն խօսեցաւ Խաչատր Քիլէրմեան: Ունին իրենց մասնաճիւղերը եւ խոստացան ընել այն ինչ որ կարեւոր է:

Հողի Ուսմն. Միութեան կողմէն խօսեցաւ Ահարոն Գէռոդեան ոչպատգամաւորի հանդամանքով. տուած բացատրութիւնները քաջալերական էին:

Արփառտի Վերաշինաց Միութեան մասին տեղեկութիւն տուաւ Պըն. Յարէթ Փիլիպպոսեան թէ Արփառտի Վերաշինաց Միութիւնը իր յօժարակամօրէն յանձնառու եղած §1200ի գումարը չատ մօտ ատենէն իր պատկան տեղը պիտի հասցնէ: Արփառտի Վերաշինաց Միութեան այս որոշումը գնահատութեան արժանացաւ Պատգմ. Փողովէն:

Մեծկերտի Ուսումնասիրացի կողմէն խօսեցաւ Պ. Դարբինեան, խոստանալով որ Մեծկերտի Մասնաճիւղը շաբթուայ մը ընթացքին 600 տոլար պիտի զրկէ կեղրոն: Մեծկերտիներէն մեծ ակնկալութիւններ կը սպասուի:

Պատընի Ճիւնիքը Լիկին կողմէն խօսեցան Պետրոս Առաքելեան, Պետրոս Կիւլիսասեան եւ Սիսակ Խուշօեան, որոնց կազմակերպած ձեւը եւ տեսակէտները չատ օրինաւոր գըտնեցան: Իրենց գծած օրինագծէն այնպէս թուեցաւ որ անոնք ենթակայ են Պատընի Մասնաճիւղին եւ ոչ թէ կեղրոնին եւ այդպէս ալ ընդունուեցաւ:

Այս քաջալերական զեկոյցներէն վերջ Առաջին Նիսար փակուեցաւ ժամը 4.30-ին:

#### 4.- ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՐՑ

#### ՆԻՍ ԵՐԿՐՈՐԴ

Երկրորդ նիստը բացուեցաւ ժամը 5-ին. ներկայ բացակայի ընթերցումը տեղի ունեցաւ:

Այս նիստի օրակարգն էր յաւելեալ հարցերով հետեւեալը.

1.- Նախորդ նիստի արձանագրութեան ընթերցում

2.- Արուարձանային հարց

3.- Գործիչի հարց

4.- Կանանց մասնաճիւղեր կազմելու հարց

5.- 200-300 Խարբերդցիներ նոր Խարբերդ դրկելու հարց

6.- Նոր մասնաճիւղեր հիմնելու հարց

7.- 12,000 տօլարի Քէմփէյլը

8.- Դադարեալ ընկերութիւններու հարց

9.- Հետէյնիկի Վերաշխացի Ռիտլիի Մասնաճիւղէն ներկայացուած 100 տօլարի պայմանագրական նուէր

10.- Կանոնագրային

11.- Տարեկան տեղեկագրի եւ հաշուեցոյցի վաւերացում

12.- Ընտրութիւն կեդր. Գործադիր Մարմնի

13.- Հեռագիր ՀՕԿ-էն դրկուած

14.- Գնահատում եւ չորհակալութիւն:

1.- ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ ԵՒ ՎԱԻԵՐԱՑՈՒՄ

Նախորդ նիստի արձանագրութիւնը կարդացուելով վաւերացուեցաւ:

#### 2- ԱՐՈՒԱՐՁԱՆԱՑԻՆ ՀԱՐՑ

Այս հարցը եկած էր Պատոնի Մասնաճիւղին կողմէն. բացարութիւն տրուեցաւ Յակոր Բարեջանեանի կողմէն. բաւական վիճաբանութիւններէ վերջ հետեւեալ բանաձեւը ընդունուեցաւ.— Բոլոր այն հայաշատ Մասնաճիւղերը որոնք կարեւոր կը գտնեն առանձին մասնաճիւղեր հիմնել իրենց շրջակայ արուարձաններուն մէջ, կրնան յառաջ երթաւ եթէ տեղւոյն վարչութիւնը յարմար նկատէ:

#### 3.- ԳՈՐԾԻՉԻ ՀԱՐՑ

Թեր ու դէմ կարծիքներէ եւ վիճաբանութիւններէ վերջ գործիչ մը ունենալը կարեւոր նկատուեցաւ: Որոշուեցաւ որ գոնէ վեց ամսուայ համար վճարեալ գործիչ մը ունենալ ուրուն պիտմէն եւ յարմարագոյն անձը գտնելը թողուեցաւ կեղրուական Գործադիր Մարմինին:

Այս հարցի մասին սա եղակացութեան եկան որ որքան որ էրիկ մարդիկ իրաւունք ունին կերտելու եւ շինելու նոր Խարբերդը Խորհրդային Հայաստանի մէջ, նոյնքան իրաւունք ունին կիմիկ մարդիկներ: Ուստի իւրաքանչիւր մասնաճիւղի պարտականութիւնն է կազմել կանանց մասնաճիւղեր առանց ժամանակ կորսնցնելու. այս առթիւ մասնաճիւղերէն ոմանք գործի ձեռնարկած են:

5.- 200-300 ԽԱՐԲԵՐԴԻՑԻՆԵՐ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՐՑ

Այս հարցը ուրիշ առթիւ ալ Պատգմ. Ժողովի եկած էր որուն մասին խորհրդակցութիւն ըլլալէ վերջ որոշուեցաւ պէտք եղած կարգադրութիւնը ընել երբ պատեհութիւնը ներկայանայ: Այսպէս կարեւոր էր նաև տուներ շինելու խնդիրը կայանի որ հոն փոխադրուող Խարբերդցիներ ի՞նչպէս պիտի աղքանի առ ըին առանց բնակարանի. ուստի պէտք է որ կեդր. Գործ վարչութիւնը գործի մղէ մասնաճիւղերը:

#### 6.- ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՀԻՄՆԵԼՈՒ ՀԱՐՑ

Այս հարցը աւելի շատ կը վերաբերի Քալիֆորնիոյ շրջանը կազմակերպելու համար: Որոշուեցաւ որ ամէն ջանք թափուի Քալիֆորնիան ոտքի հանելու եւ ամէն մէկ Խարբերդցի պարտականութեան գլուխ բերելու. որոհվեաւ որքան որ նիւնկլէնտի շրջանի Խարբերդցիները պարտականութիւն ունին նոր Խարբերդը կերտելու նոյնքան իրաւունք եւ պարտականութիւն կը ծանրանայ Քալիֆորնիոյ շրջանի ամէն մէկ Խարբերդցիի վրայ: Ամէնքիս նշանաբանը պէտք է ըլլայ շինել, չէնցնել նոր Խարբերդը Խորհրդային Հայաստանի մէջ. եթէ արտասահման գտնուող իւրաքանչիւր Խարբերդցի տարեկան մէկ տօլար տայ ոչ թէ մէկ Խարբերդ այլ կարող կ'ըլլանք երկու Խարբերդ շինելու: Քալիֆորնիոյ շրջանը մէկ ամենակարեւոր շարժաներէն ըլլալով որոշուեցաւ ամէն կարելի միջոց գործածել կազմակերպելու համար, ի պահանջել հարկին հոն տեղւոյն վրայ գտնել մէկը գործիչի հանգամանքով եւ կամ ասկէ յարմար անձ մը դրկել:

#### 7.- 12,000 ՏՈԼԱՐ ՔԷՄՓԻՑՆԻ

Այս քէմփիչի մասին ժողովը սա եղակացութեան եկաւ. կազմակերպել բոլոր մասնաճիւղերը որ միանուագ կերպով

յառաջ երթան եւ ձեռնարկներ կազմակերպեն այդ նպատակին  
համար եւ խոստացուած դումարը գոյացնեն արագութեսմբ:

### 8.- ԴԱԴԱՐԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՐՑ

Այս հարցին չուրջ թեր ու դէմ կարծիքներ վոլխանակուել-  
է վերջ, որոշուեցաւ որ այն կարդի ընկերութիւններ որոնք  
առժամեայ կերպով գործունէութենէ գաղքած են սակայն ա-  
նոնց մասնակցութիւնը պահուելու է հինին պէս այն համո-  
զումով թէ թերեւս իրենց գործունէութեան ոկսելով մաս-  
նակցութիւննին նորէն կը բերէն:

9.- Հիւսէ յնիկի Վերաշնացի Ռիտլիի Մասնաճիւղի կող-  
մէն հարց մը բերուած էր այս ժողովին որ կը խոստանային  
100 (Հարիւր) տօլար Միութեանս տրամադրութեան ներքեւ  
դնել, նահատակ Դուրեան Սրբազնի անունը յաւերժացնող  
մէկ բարենպատակ հաստատութեան մը շինութեան գործած-  
ուելու համար: Այս հարցին չուրջ հետեւեալ որոշումը արր-  
ուեցաւ: Նուէրներ կ'ընդունուին սիրայօժար կերպով եւ  
պիտի գործածուին իրը կորիզ ապագային հիմնուելիք մատե-  
նալարանին եւ կամ ուեէ գեղեցիկ ձեռնարկի մը որը որ կտ-  
րեւոր եւ այժմէական կը նկատուի տեղական ներկայացու-  
ցիչներու կողմէն կեղրոնի գիտակցութեամբ:

### 10. ԿԱՆՈՆԱԳՐԱՅԻՆ

Միութեանս կանոնագրին մաս կազմելու համար հետեւ-  
եալ որոշումները արուեցան: —

Ա.- Պատգամաւորական ժողովներու դիւանի ընտրութիւ-  
նը պէտք է կատարուի գաղտնի քուէարկութեամբ:

Բ.- Կեղրոնական Գործադիր Մարմինի անդամները պի-  
տի չկրնան պատգամաւոր ընտրուիլ:

Գ.- Համաթարբերդցիական Միութեան անդամատուրքը  
տարեկան առ նուազն մէկ տօլար է եւ մասնաճիւղեր պիտի  
դանձեն տարեվճարները առանց բացառութեան:

### 11.- ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ ԵՒ ՀԱՇՈՒԵՑՈՅՑԻ

#### ՎԱԽԵՐԱՅՈՒՄ

Հաշուեքնիչ յանձնախումը յայտարարեց որ գանձապա-  
հին հաշիմները ճիշտ դտած եւ վաւերացուցած էր: Իսկ Տա-  
րեկան Տեղեկադիրը որ նախորդ նիստին մէջ կարգացուած էր՝

Պատգամաւորական ժողովը գոհացուցիչ գտնելով վաւերա-  
ցուց եւ իր գնահատութիւնը յայտնեց, ինչպէս նաեւ հաշուա-  
կալին որ լաւ կերպով տարած էր իր պաշտօնը:

### 12.- ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԵԴՐ ԳՈՐԾԱԴԻՒԲ ՄԱՐՄԻՆԻ

Ընտրական յանձնախումը ներկայացուց ընտրելիներու  
եռապատիկ ցանկ մը որմէ ընտրուեցան հետեւեալները

Մաղաք Պէրպէրեան	26 քուէ
Տօքթ. Յ. Ծովիկեան	24 »
Յարութիւն Խոլլիկեան	20 »
Մարտիրոս Տէր Ցոհաննէսեան	16 »
Տօքթ. Մ. Կ. Սրապեան	15 »
ՄԵԼՔՕՆ ՌԱՄԻԿԵԱՆ	15 »
Յարութիւն Սոլլիկեան	15 »
Ղաղար Սրապեան	13 »
Միհրան Կօչկարեան	13 »

Յաջորդ առաւելագոյն քուէ առնողներն էին Գէորգ Կիւլ-  
իսաեան 12 քուէ, Թաղէոս Յետիցեան 12 քուէ, Յակոբ Բա-  
րեջանեան 11 քուէ:

### 13.- ՀԵՌԱԳԻՒԲ

Պատգամաւորական ժողովը ստացաւ հետեւեալ հեռագի-  
րը Ամերիկայի ՀՕԿ-ի Կեդր. Միութեան կողմէ, որուն պա-  
րունակութիւնը հետեւեալն էր: —

Խարբերդցիներու Պատգամաւորական ժողովին: — Բոցա-  
վառ ողջոյներ Զեր Եօթներորդ Պատգամաւորական ժողո-  
վին, կը ցանկանանք յաջողութիւն Զեր աշխատանքներին:   
Վաստահ հնք թէ Խորհրդացին Հայաստանի մէջ Զեր սկսած  
գործին մեծ մղում պիտի տայ Զեր համագումարը եւ Խար-  
բերդցին պատուով զլուխ պիտի հանէ իր սկսած շինարարու-  
թիւնը:

Որոշուեցաւ այս հեռագրին պատասխանել նամակով մը  
եւ չնորհակալութիւն յայտնել:

14.- ԳԻԱՀԱՏՈՒՄ ԵՒ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Որոշուեցաւ գնահատում եւ չնորհակալութիւն յայտնել  
հետեւեալ մարմիններուն եւ անձանց .—

- 1.— Խորհրդային Հայաստանի կառավարութեան :  
2.— Խորհ. Հայաստանի ներկայացուցիչներուն :  
3.— Կեդրոնական Գործադիր Մարմինի կազմին :  
4.— Պատուոյ Անդամներուն :

Եօթներորդ Պատգամաւորական ժողովը վերջացաւ գե-  
շերուան ժամը 11-ին, պատգամաւորներ մեկնեցան դոհ տպա-  
ւորութեան տակ: Ապրի Խարբերդցին որ ապրիլ եւ ապրելու կը սիրէ: 0'ն, ուրեմն դէպի գործ եւ շինարարական աշխա-  
տանք:

Ատենադպիր Ատենապետ  
ԳՀՈՐԴ ԿԻՒԽԱՍԵԱՆ ՄԵԼՔՈՆ ՌՍՏԻԿԵԱՆ



ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԱ-ԽԱՐԲԵՐԴԻՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԻ

(Ծրջան Խօթերորդ — 18 Ամիս)

Ներկայացուած

Խօթերորդ Պատգամաւորական Ժողովի  
Գումարեալ ի Թարգում, Սեպտ. 23, 1934

Յարգելի Պատգամաւորներ,

Սոյն ՏԵՂԵԿԱԳԻՐԸ որ կը ներկայացնենք Ձեզ կը պարու-  
նակէ Միութեանս 18 ամիսներու համառոտ տեղեկատուու-  
թիւնը, սկսեալ Մարտ 20, 1933-էն մինչեւ Սեպտեմբեր 22,  
1934:

Կեդրոնական Գործադիր Մարմինը յարմար նկատեց Պատ-  
գամաւորական ժողովը գումարել Սեպտեմբերին փոխան  
Մարտին երկու պատճառներով: Նախ՝ որ Սեպտեմբերը ըլ-  
լալով Նոր-Խարբերդի հիմնարկութեան թուականը, Պատգա-  
մաւորական ժողովը առիթը կ'ունենար ակնարկ մը նետելու  
անցնող տարիներու վրայ եւ ըմբռնելու թէ ինչ նուածումներ.  
կատարուած են ամէն մէկ տարի անոր հիմնարկութենէն ի  
վեր, եւ երկրորդ՝ քանի որ Սեպտեմբերին կը ստանանք Խ.  
Հայաստանի մեր ներկայացուցիչներուն տարեկան հաշում-  
կը իւր, կեդրոնս դիւրութիւն մը կ'ունենար ներկայացնելու  
Պատգամաւորական ժողովին թէ կեդրոնի եւ թէ անոնց հա-  
շիւները միասին:

Տարեկան ՏԵՂԵԿԱԳԻՐ մը պէտք է որ ներկայացնէ ընկե-  
րութեան մը ճշգրիտ պատկերը իր իսկութեան մէջ, որպէս զի  
երբ պատգամաւորներ մեկնին, կարող ըլլան իրենց ընկերնե-  
րուն տանիլ հարկ եղած տեղեկութիւնները եւ բացատրու-  
թիւնները:

Տեղեկագրիս նպատակն է այդ ճշգրիտ պատկերը տալ  
Ձեզ որ կը ներկայացնէք Մասնաճիւղեր, Կրտսերաց լիկ եւ  
օժանդակող ընկերութիւններ:

Կեդրոնական Գործադիր Մարմինս շատ բան կը պարտի  
այն կազմակերպութեանց զորս Դուք կը ներկայացնէք:

Առանց անոնց աջակցութեան կեդրոնական Գործադիր  
Մարմինը պիտի չի կրնար որեւէ ծրագիր կամ ձեռնարկ յա-  
ջողցնել:

Հստ որում մեր պարտականութիւնն է տեղեակ պահել  
Միութեանս հետ կապ ունեցող կազմակերպութիւններ եւ մաս-  
նաճիւղեր նոր Խարբերդի շինարարական բոլոր ձեռնարկնե-  
րուն:

### 1.- ՄՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ 1933-1934 ՇՐՋԱՆԻՆ

Ա.- Կեդրոնական Գործադիր Մարմինի անդամները որ  
վարեցին Միութեանս գործերը այս անցեալ 18 ամիսներու  
չրջանին հետեւեալներն էին.—

Տօք. Յ. Ծովիկեան, ասենապետ:

Մարտիրոս Տէր Յովհաննէսեան, փոխ-ատենապետ:

Յարէթ Մ. Փիլիպոսսեան, ատենադպիր:

Յարութիւն Խոլիկեան, գանձապահ:

Յարութիւն Սողիկեան, հաշուակալ:

Կարապետ Ղաղարոսեան, Խորհրդական:

Մաղաք Պէրապէրեան, Խորհրդական:

Նշան Մալխասեան, Խորհրդական

Տօք. Կ. Յ. Գալուստեան, Խորհրդական:

Մարգիս Կօշկարեան, պատուոյ անդամ:

Բ.- Խ. Հայաստանի մէջ Վարչական Մարմնոյ անդամ-  
ներն են.—

Միսաք Մազմաննան, Միութեանս լիազօր ներկայացու-  
ցիչը:

Կարապետ Տատեևսեան, դեկապար շինութեանց:

Ուրախ ենք որ հինգ օժանդակող ընկերութիւններու ներ-  
կայացուցիչները Կեդրոնի վարչական կազմին մէջ էին. Խար-  
բերդի Կրթասիրաց Միացեալ Ընկերութեան, իջմէի Միաց-  
եալ Ընկերութեան, Քէսիրիկի Ընդհանուր Միութեան եւ Բազ-  
մաշէնի Լուս- Ուսումնասիրաց Ընկերութեան, ինչպէս նաեւ  
Համա-Խարբերդցիական Միութեան Պոսթոնի եւ Ուստըրի  
Մասնաճիւղերու ներկայացուցիչները:

Այնպէս որ Կեդրոնական Գործադիր Մարմինը իրապէս  
ներկայացուցչական մարմին մը եղած է անցեալ չորս տարի-  
ներու շրջանին, եւ այս իրողութեան կը պարտինք այն կա-  
տարեալ վստահութիւնը որ կը վայելենք օժանդակող ընկե-  
րութիւններէ:

### 2.- ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԻ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Կեդրոնը շատ քիչ բացառութեամբ ժողով գումարած է  
ամիսը անդամ մը, ուր մանրակրկիտ կերպով նկատի առնը-  
ւած են թէ՝ Ամերիկեան եւ թէ Արտասահմանեան թղթակցու-  
թիւնները, որոնք զգալապէս կ'ամճին ամէն տարի:

Միութեան գործերուն ընթացք տալու համար պիտմէներ  
կը քուէարկուին մեծամասնութեան հաւանութեամբը, եւ գոր-  
ծունէութեան ծրագիրներ կը մշակուին:

Այս շրջանին 15 ժողովներ տեղի ունեցած են, որոնցմէ  
մին խորհրդակցական ժողով էր, որուն հրաւիրուած էին օ-  
ժանդակող ընկերութիւններու ներկայացուցիչները:

Երբ Պատգամատորական ժողովի թուականը փոխուեցաւ,  
որոշուեցաւ որ ամէն տարի Մարտ ամսուան մէջ գումարուի  
խորհրդակցական ժողով մը: Այնպէս որ Սեպտեմբեր ամիսը  
պիտի ըլլայ Պատգամատորական ժողովի թուականը, իսկ  
Մարտ ամիսը խորհրդակցական ժողովի թուականը:

### 3.- ՄԻՈՒԹԵԱՆՍ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ա.- Մասնաճիւղեր՝ թուով 11:

Պոսթոն, Նիւ Եորք, Ուստըր, Լոզ Անձէլը, Ֆրէզնօ, Լին:  
Յաւալի է որ վերջին երկուքը այս շրջանիս որեւէ գործ կա-  
տարած չեն:

Սակայն չափէն աւելի քաջալերական է որ երբ տնտեսա-  
կան տագնապի պատճառաւ եւ կամ տեղական աննպաստ պայ-  
մաններու տակ մէր հին մասնաճիւղերը լուծուելով անդոր-  
ծութեան դատապարուեցան, նորեր ուժեղ եւ կայտառ, ծը-  
նունդ առին, հոս Ամերիկա եւ արտասահմանի մէջ:

Նոր Մասնաճիւղերն են.— Լիօն (Ֆրանսա), Մեքսիկօ  
Սիթի, Քօրտոպա (Արճէնթին), Միլուօքի եւ Շիքակօ, որոնք  
ամէնն ալ եռանդով գործին փարած են եւ կ'ընեն իրենց կա-  
րելին:

Գաղափար մը տալու համար թէ մասնաճիւղեր ինչ հա-  
մեմատութիւններով մեղի աջակցած են, ահաւասիկ հաշիւր

Պոսթոն

Նիւ Եորք

Ուստըր

Լոզ Անձէլը

Ֆրէզնօ

Լին  
 Նորակազմ Մասնակիւղեր  
 Լիօն (Ֆրանսա) 54.79  
 Մեքսիկո Սիթի 97.41  
 Քորտօպա  
 Շիքակոյ  
 Դուքէկըն 80.00  
 Կրտսերաց Լիկ 100.00

Բ.՝ Կրտսերաց Լիկը — Պոսթոնի մէջ — որոնցմէ ստացած էնք 100 տոլար : Անոնք մէծ աշխատժով աշխատանքի լլծուած էն հիւանդանոցի մը Փրնտը գոյացնելու : Իրաւունք ունինք անոնցմէ մէծ գործեր ակնկարի եւ կը հաւատանք որ մէզ յուսախար պիտի չընեն :

Գ.՝ Օժանդակող ընկերութիւններ մէր կողքին կանգնած են :

Խարբերդի կրթասիրաց Միացեալ Ընկերութիւն, Հիւսէյնիկի Վերաշխաց Միութիւն, Քէսիրիկի Ընդհանուր Միութիւն, Իջմէի Միացեալ Ուս . Ընկերութիւն, Հողէի Միացեալ Ուս . Ընկերութիւն, Բաղմաշէնի Լուս . Ուս . Ընկերութիւն, Փէրչէնձի Ուս . Ընկերութիւն, Մօրէնիկի Ուս . Ընկերութիւն, Արփառտի Վերաշխաց Միութիւն եւ Մեծկերտի Ուսումնասիրաց Ընկերութիւն :

Այս օժանդակող ընկերութիւններէն երկուքը, Փէրչէնձի Ուսումնասիրաց Ընկերութիւնը եւ Մօրէնիկի Ուսումնասիրաց Ընկերութիւնը այս շրջանիս մէջ մեղի սկսեցին տալ իրենց նպաստները Նոր Խարբերդի Շինութեան համար :

#### 4.- ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՔՈՒԵԱՐԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Նախորդ Պատգամաւորական ժողովը երկու կարեւոր ուղումներ անցուց —

Առաջինը, Քալիֆորնիոյ Շրջանը կաղմակերպելու որոշումն էր հետեւեալ բանաձեւով —

«Նկատելով որ Քալիֆորնիոյ Շրջանի Խարբերդցիները, բացառութիւնները յարգելով, պարագաներու բերմամբ կարող եղած չեն որեւէ նպաստ տալ Նոր Խարբերդի շինութեան, Պատգամաւորական ժողովը կ'որոշէ յառաջիկայ տարեշրջա-

նին հոն թափել սիսթէմաթիք աշխատանք մասնաձիւղեր կադրմէլու եւ դիմումներ ընելու ի նպաստ Նոր Խարբերդի» :

Կեդրոնական Գործադիր Մարմինը ջանաց այս որոշումը գործադիրէլ : Խորովզ էլմասեանը, որ Լոզ Անձէլը կը գտնըւի, հրաւիրեց գործիչի պաշտօնին 200 տոլարի պիտածէով մը երկու ամսուան համար : Կը ցաւինք որ նա չկրցաւ այդ պաշտօնը յանձն առնել անձնական պատճառներով :

Անոր մերժումէն յետոյ Կեդրոնը չը կրցաւ ուրիշ կարգադրութիւն ընել : Կեդրոնի անկեղծ գաղափարն է որ Քամփորնիոյ նման մէծ եւ կարեւոր շրջան մը կազմակերպել առանց պահանջուած ծախքերը ընելու կարելի չէ : Մինչդեռ անցեալ Պատգամաւորական ժողովի մէկ ուրիշ որոշումն էր «որքան կարելի է ծախքերը պակսեցնել» : Արդ Պատգամաւորական ժողովիր կը մնայ այս խնդրոյն լուծումը գտնել կերպով մը :

Երկրորդ որոշումն էր Ամերիկեան Պօրտ Ընկերութեան քով գտնուած Խարբերդցիներու անվճար դրամները Նոր Խարբերդի շինութեան յատկացնել աշխատիլ :

Կեդրոնը ատեն մը խիստ մէծ աշխատանք թափեց այդ ուղղութեամբ, տեսակցութիւններ ունենալով Պօրտ Ընկերութեան պաշտօնեաներուն հետ : Սակայն ցաւ ի սիրտ կ'ըսենք որ այն Խարբերդցիները որոնք դրամներ յանձնած էին Պօրտին ու ետ ստացած չէին այդ դրամները, մեղի զլացան իրենց բարոյական աշակցութիւնը երբ հրապարակաւ այդ աշակցութիւնը խնդրեցինք : Հետեւապէս Կեդրոնը ստիպուեցաւ դադրեցնել իր աշխատանքները եւ ձեռնպահ մնալ :

#### 5.- ՄԻՈՒԹԵԱՆ ԵԿԱՄՈՒՏԻ ԱՐԲԻՒՐՆԵՐԸ

Ա.՝ Միութեանս եկամուտի աղբերները գլխաւորագետ մասնաձիւղերու ձեռամբ են հետեւեալները .

1.- Մասնաճիւղային ձեռնարկներ — հանդէս-խնճոյք, զաշտահանդէս, ներկայացում, պար :

2.- Անդամատուրքեր :

3.- Փոխան ծաղկեալսակի նուիրատուութիւններ :

4.- Նուէրներ անհատ Խարբերդցիներէ :

5.- Բացառիկ հանգանակութիւններ որոշ նպատակներու համար :



Գանձապահին հաշուեցոյցէն յայտնի պիտի ըլլայ թէ ուրոնցմէ, կամ որ տեղերէն այդպիսի գումարներ ստացուած են:

Բ. Օժանդակող ընկերութիւններու նուէրները մեր գանձին կարեւոր մասերը կը կազմեն:

Ի տեղին է քիչ մը մանրամասնել այս կէտը:

(ա) Այս շրջանիս մէջ գանձուած գումարները հետեւեալ ներն են.

Գ.- Ընկերութիւններէ ցարդ գանձուած նուէրներու ամբողջական հաշիվը.—

1.- Խարբերդի Կրթ. Միացեալ Ընկ.	11,680.82
2.- Հիւսէ ֆիկի Վերաշնաց Միութիւն	3,800.00
3.- Քէսիրիկի Ընդհ. Միութիւն	3,500.00
4.- Հողէի Միացեալ Ուս. Ընկ.	2,400.00
5.- Իջմէի Միացեալ Ուս. Ընկ.	2,000.00
6.- Բաղմաշնի Լուս. Ուս. Ընկ.	1,400.00
7.- Փէրչէնճի Ուս. Ընկ.	1,200.00
8.- Մեծկերտի Ուս. Ընկ.	600.00
9.- Տիթրոյթի Համալարբերդ. Ընկ. (լուծուած)	400.00
10.- Խուլագիւղի Յարէթ-Յակոր Գր. Միութիւն	346.48
11.- Արփահատի Վեր. Միութիւն	150.00
12.- Մօրէնիկի Ուս. Ընկ.	200.00
13.- Եփրատի Սանուց Ընկերութիւն	150.00
	26,727.30
Ապառիկներով միասին	27,827.30

6.- Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՑԱՏԿԱՑՈՒԱԾ  
ՊԻՒՏՃԵՆ ԱՅՍ ՇՐՋԱՆԻՍ ՀԱՄԱՐ

Եթէ մեր ձեռքը հասած ըլլար մանրամասն հաշիւը այն օժանդակութեանց որ Խ. Հ. կառավարութիւնը մատուցած է յարդ նոր Խարբերդի շինարարական բոլոր գործերուն, Հիացումով եւ երախտագիտական ջերմ զգացումներով մեր սրտերը պիտի լեցուէին: Պարզ պիտի տեսնէինք որ մեր նպաստները բաղդատաբար խիստ չնչին տոկոս մը կը կազմեն:

Կառավարութեան յատկացուցած պիտաճէն այս շրջանիս մէջ նոր Խարբերդի համար կը հասնի \$830,000 բուպլիի: Ծինարարութեանց համար 300,000 բուպլի, գիւղատնտեսական նպատակներու համար 400,000, յուրի խողովակներու դետե-

դումին համար 100,000 բուպլի, հիւանդանոցի չէնքին համար 30,000 բուպլի: Եթէ այս հսկայ գումարները Ամերիկեան տուլարի վերածենք կ'ունենանք \$330,000:

Մինչդեռ մեր ղրկած դրամներու համագումարը (ապրանքի վերածուած) ցարդ եղած է միայն \$42,221.59:

### 7.- ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՆԶԸ ՄՏԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍԿԻԶԲԻՆ ՄԻՒԶ ԹՈՒԱԿԱՆՍ

Միութիւնս գանձած է հետեւեալ գումարները ժամանակագրական կարգով.—	8,727.93
Անձեռնմխելի դրամագլուխը Միութեան կազմակերպութեան առաջին օրերուն	2,441.32
Առաջին Շրջան (1927-1928)	9,702.80
Երկրորդ Շրջան (1928-1929)	9,730.95
Երրորդ Շրջան (1929-1930)	7,284.15
Չորրորդ Շրջան (1930-1931)	4,265.07
Հինգերորդ Շրջան (1931-1932)	5,399.95
Վեցերորդ Շրջան (1932-1933)	7,129.63
Եօթերորդ Շրջան (1933 Մարտ — 1934 Սեպտ.)	\$52,981.80

Դպրոցի կտակի դրամը յանձնուած է ուղղակի Խ. Հ. կառավարութեան — մօտաւորապէս \$6077.00: Այնպէս որ այս դումարը զանց ըրինք վերեւ դրուած հաշուեցուցակին:

Ինչպէս նախապէս յիշեցինք (54,681.80) գումարին 42,221.59-ը ղրկուած է Խ. Հ. Հայաստան (ապրանքի ձեւին տակ):

8.- ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ  
ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՄԷԶ

Ամէնէն քաջալերական լուրը որ ստացած ենք նոր Խարբերդէն է Բարձրագոյն Վարժարանի հիմնարկութեան լուրը:

«Միութիւն» պաշտօնաթերթը Հ. Բ. Լ. Միութեան 1934, Յուլիս-Օգոստոս թիւին մէջ հետեւեալը կը գրէ.—

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՎԱՐԺԱՐԱԿԱՆ

Հ. Բ. Լ. Միութեան կողմէ Խարբերդի ողբ. Հաճի Մկրտիչ Յովհաննէսիսեանի հիմնարկամով եւ անունով կառուցուելիք չէնքի մասին, ժողկոմխորհի Կառավարիչ քաղ. Թոքմաջեանի

նամակէն կ'արտագրենք հետեւեալ տեղեկութիւնները.

«Նոր Խարբերդում Մկրտիչ Յովհաննէսեանի անուան դըպրոցական շէնքի կառուցման աշխատանքները արդէն սկսուել են, եւ մինչեւ հիմա կատարուել են հետեւեալ աշխատանքները.»

«1.— Որոշուել է շէնքի կառուցման ճիշդ վայրը եւ կաղմակերպուել է շինանիւթերի ապահովման եւ այդպիսիք տեղում փոխադրելու գործը: Ներկայումս փոխադրուած է կառուցուելիք շէնքի վայրը աւագ՝ 100 խ. մ., լեռ քար հիմքի համար 110-120 խ. մեդր, պատերի շարի համար նայիս քարեր 300 հատ: Փոխադրական աշխատանքները սիստեմատիկօրէն շարունակում են: Նմանապէս դուրս է դրուել 2 վակոն կիր:

«2.— Շէնքի հողամասը բաժանուած է մասերի եւ սկըսուած են հիմքի քանդման աշխատանքները:

«Աշխատանքները տարւում են այս հաշուով, որ այս տարուայ շինարարական սէզոնում շէնքի հիմքի կառուցումը անպայման աւարտուի, իսկ 1934-35 թ. ուսումնական տարւում ամբողջ շէնքը ըստ նախատեսնուած պլանի (երկու յարկ) պատրաստ լինի օգտագործման համար»:

Ողբացեալ Հաճի Մկրտիչ Յովհաննէսեանի փափաքը իրականացաւ: Անոր կտակած դրամը \$6077 (թէպէտ դրամի եւ շահաբաժիններու անկումէն առաջ \$10,000-ի կը հասնէր) եւ Խ. Հ. կառավարութեան յատկացուցած 90,000 տոլարը կամ 190,000 րուպլին կարելի պիտի ընեն կառուցումը հոյակապ գեղեցիկ դպրոցի շէնքին:

Շէնքը երկու յարկէ կը բաղկանայ — տղայոց եւ աղջկանց բաժանմունքներով: Երբ շինութիւնը առարտի, 320 աշակերտներ կարող պիտի ըլլան հոն ուսանիլ:

Նոր Խարբերդը հին Խարբերդի պէտ լուսոյ վառարան մը պիտի ըլլայ շատ չանցած:

Նոր Խարբերդի 6 յարկաբաժիններուն վրայ այս շրջանիս աւելցան 2 նոր յարկաբաժիններ որ կը կրեն Բաղմաշէնի անունը: Բոլոր շինուած շէնքերը կը կրեն ցուցատախտակներ որոնց վրայ գրուած են օժանդակող ընկերութիւններու գիւղերուն անունները, ինչպէս նաեւ Խարբերդ քաղաքին անունը: Այդ անուններն են. — Խարբերդ, իջմէ, Զիւսէյնիկ, Քէսիրիկ, Հողէ, Խուլագիւղ, Մեծկերտ եւ Բաղմաշէն:

Նոր Խարբերդի ամբողջ շրջակայքը, մօտ երկու հարիւր

հեկտար տարածութիւն, որը հաւասար է 500 էյքրի, այս տարի տնկած են խաղողի այգի եւ պտղատու ծառատուններ:

Շատ չանցած նոր Խարբերդը թաղուած կ'ըլլայ ծառերու եւ ծաղիկներու մէջ:

Այժմ նոր Խարբերդը ունի բանջարանոց, ծառատուններ, մթերանոց, կրած եւայլն:

Բնակչութեան թիւը կը հասնի 500-ի:

Խիստ շատ հետաքրքրական պիտի ըլլար տեսնել չարժական պատկերները քաղաքին եւ շրջակայքին, որուն կը սպասնք ակնկառոյց:

\* \* \*

Տեղեկադրին այս առաջին մասը յատկացուցինք Միութեանս կազմի եւ գանձի մանրամասնութիւններուն եւ նոր Խարբերդի համառօտ նկարագրութեան, շինարարական եւ Խարբերդի համառօտ նկարագրական տեսակիտին, արդ անցնինք ուղղակի Միութեան կատարած աշխատանքներուն եւ այլ կարեւոր հարցերու եւ թելադրութեանց:

9.— ԿԵԴՐՈՆԻ ԶԱՆՔԵՐԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(1) Մեր ներկայացուցիչներու յաջորդական նամակները ջուրի խողովակներու պէտքը կը շեշտէին:

Եւ սակայն չունենալով որեւէ գաղափար թէ որքան երկարութեամբ, ինչ տրամագծով եւ ինչ տարբեր ձեւերով խողակներ պէտք էր ապալրել, եւ թէ որքան պիտնէի պէտքը դուրս կար, կեղրոնը խնդրեց խողովակներու պլու փրինթը: Մինչ կար, կեղրոնը խնդրեց խողովակներու պլու փրինթը: Մինչ կար, կեղրոնը խնդրեց խողովակներու պլու փրինթը: Կեղրոնը հրապարակ դրաւ 25 սէնթ արժող նուիրատոմսեր խողովակներու համար \$2500ի արժողութեամբ, այն հաւատքովը որ Խարբերդցիներու հոծ բազմութեան շատ դիւրին պիտի ըլլար այդ չնչին գումարը 25 սէնթ վճարել եւ խողովակներու գնումը փութացնել, երբ վերջնական մանրամասնութիւնները ստացուած ըլլային:

Այս նուիրատոմսերը ցրուըւեցան այլեւայլ անձանց եւ մասնածիւղերէ ոմանց:

Ցաւալի է որ մեծ արդիւնք մը չապահովուեցաւ: Ամէնէն մեծ գումարը լող Ամէնէլու Մասնաճիւղէն եկաւ, \$104.78 — անհատներէ \$11.25, ընդամէնը \$116.03:

Այս նուիրատոմսերու սպառումի խնդիրը այնքան ալ դիւ-

րին չէր, որովհետեւ աշխատող ձեռքեր պակսեցան, եւ գործը չունեցաւ ակնկալուած յաջողութիւնը:

(2) Ապա կեդրոնը 12,000 տոլարի հանգանակութիւն մը հրապարակ դրաւ: Այս հանգանակութիւնը ստիպողական էր երբ օրուան պահանջները շատցան:

Օրուան պահանջներն էին, ոչ միայն ջուրի խողովակներ, այլ թրանսֆորմըրի մը մասերը, դարձանատուն մը եւ օթօ նորոգելու կայարան մը:

Մարտին մէջ գումարուած խորհրդակցական ժողովի որոշումն էր որ կեդրոնական Գործադիր Մարմինը լրջօրէն ուղեց գործադրութեան զնել իր ձեռքին մէջ ունեցած միջոցներովը:

Կեդրոնը խորհեցաւ կարճ ժամանակի մը համար ունենալ գործիչ մը հանգանակութեան գործը կազմակերպելու համար: Յուրիս եւ Օգոստոս ամիսներուն մէջ գործիչը լծուեցաւ իր գործին: Այցելեց մեծ կեդրոններ, նիւ Եօրք, Ռւստըր, Փրավիտէնս, Լորէնս եւ շրջակայքը:

Հեռաւոր տեղերու հասաւ յաճախակի թղթակցութիւններով, անհատական դիմումներ կատարեց, առեւտրական տուներու նամակներ գրուեցան, շրջաբերականներ գրուեցան եւ թերթի մէջ հանգանակութիւնը յայտարարուեցաւ: Հանգանակութեան գործը կազմակերպուեցաւ նիւ Եօրքի, Ռւստըրի, չափով մը Փրավիտէնսի եւ Ռւօքէկընի մէջ:

Այնպէս որ ամառուան այս երկու ամիսներուն հանգանակութեան բոլոր նախապատրաստական քայլերը առնուած են կ'ակնկալնք որ աշնան ամիսներուն չօշափելի արդիւնքը պահովենք:

Հանգանակութեան հրապարակ դրուելին ասդին ուրախ ենք որ ուսումնասիրացներէ ոմանք իրենց գանձէն գումարներ յատկացուցին այս հանգանակութեան: Քէսիրիկ 500, Հիւսէյիկ 400, Բազմաշէն 200, Մօրէնիկ 200, Արփաուտ 50: Գումար՝ 1,350 տոլար:

Ռւօքէկընի նորակազմ Մասնաճիւղը որու 60 տոլարի գօթա մը որոշուած էր, զրկեց 80 տոլարի վճարագիր մը իրեն իրենց բաժինը: Առաջին մասնաճիւղն է որ իրապէս մասնակցեցաւ այս հանգանակութեան: Ուրիշներ հաւաքած են գումարներ, սակայն կեդրոնս տակաւին ստացմած չէ այդ գումարները: Օրինակ՝ նիւ Եօրքի Մասնաճիւղը եւ Շիքակօյի նորակազմ Մասնաճիւղը:

Արդ Պատգամառուական ժողովին կ'իյնայ միջոցներ յօ-

րինել այս հանգանակութիւնը բնելու կատարեալ յաջողութիւն մը:

## 10.- ՊՐՕՊԱԿԱՆՏԻ ԳՈՐԾԸ

Այս չըշանիս մէջ կեդրոնը չկրցաւ սովորականին ոկտոպականտի գործին մեծ մղում մը տալ իր կամքէն անկախ պատճառներով:

Կար ատեն մը որ Մամուլը կը ժատուցանէր մեզի մեծ ծառայութիւններ եւ մենք այդ ծառայութիւնները հրապարակաւ կաւ կը գնահատէինք եւ չնորհակալութեան որոշումներ կը քուէարկէինք:

Սակայն եկաւ ատեն մը որ բոլորովին դադար առաւ այդ բարոյական օժանդակութիւնը:

«Բանւոր» թերթը (բացառութիւն ըլլալով) ուրախ ենք յայտարարելու որ ազնուորէն հիւրընկալեց մեր պաշտօնական գեկոյցները եւ տեղեկութիւնները իր էջերուն վրայ:

Մենք անոր կը պարտինք անկեղծ երախտագիտութիւն: Կեդրոնը, սակայն, այսքանը բաւ չը համարելով ձեռնարկ կեց պղտիկ պատկերազարդ գրքոյիկի մը հրատարակման:

Այս գրքոյիկը չափով մը պղոպականտի գործը կատարեց եւ հանգանակութեան ձեռնարկին ալ նպաստեց:

Առաջին տպագրութիւնը (1000 օրինակ) կարճ ատենէն սպասեցաւ եւ կեդրոնը ստիպուեցաւ երկրորդ տպագրութիւն մը հանել (1000 օրինակ):

Այդ փոքրիկ գրքոյիկը կարդացողը կրնայ լաւ եւ ճշգրիտ դադարիար մը կազմել նոր Խարբերդի մասին, Միութեան ծրագալիքն մինչ թուականս:

Կեդրոնական Գործադիր Մարմինը տարիներէ ի վեր մեծ կարեւորութիւն տուած է պղոպականտի գործին, եւ այս տարի ալ կարելի ջանքեր ըրաւ այդ ուղղութեամբ:

Պղոպականտին կը պարտինք այն վառ հետաքրքրութիւնը ունեցան մէջ ունեցան շատ մը Խարբերդցիներ նոր Խարբերդի շինարարական գործերու մասին:

Մեծ յայտարարութիւնները Սեպտեմբեր 15-ի, Տարեկան Տեղեկագրի հրատարակութիւնը, եւ այս տարուան պղտիկ գրքոյիկի հրատարակումը պատճառ եղան որ ուսումնասիրացներէ շատեր աւելի մօտենան Միութեանս:

Զորս-Հինգ նոր մասնաճիւղերու կազմութիւնը եւ անմիշապէս դործիլ լծուիլը արդիւնք է այն պրօպականտին որ Կեղրոնը կատարած է յարատեւօրին եւ հաւատարմաբար, առանց ծանր ծախքերու ինքինք ենթարկելու:

### 11.- ՆԵՐԳԱՂԹԻ ՀԱՐՑԸ

Կեղրոնիս փափաքը եւ ջանքը եղած է ներգաղթի խընդրոյն տալ գոհացուցիչ լուծում մը:

Մեր ներկայացուցիչներու ուղղեալ նամակները բոլորն ալ քիչ բացառութեամբ կը չետեն այս խնդրոյն աւագ կարեւութիւնը:

Ղրկած ենք Խ. Հայաստան՝ մեր ներկայացուցիչներուն ներգաղթողներու ցանկերը Բազմաշէնի եւ Քէսիրիկի Ընկերութիւններու կողմէն պատրաստուած:

Վճռական եւ վերջնական պատասխան տակաւին ստացած չենք: Մեր ներկայացուցիչները կը դրեն որ այդ ցանկերը յանձնուած են կառավարութեան եւ պատասխանի կը սպասեն:

Պարտաւոր ենք, սակայն, յիշել Զեղ որ Կառավարութիւնը սկզբունք ըրած է նախ աշխատող ձեռքերու մուտքը արտօնել, քանի որ Նոր Խարբերդը կ'անցնի շինարարական շըրջանէ մը եւ աշխատողներու պէտքը խիստ զդալի է: Նոյն ատեն կ'ուզենք յիշել որ նախապատուութիւն պիտի տրուի անոնց որ կուզան այն գիւղերէն որոնց ընկերութիւնները օժանդակած են Միութեան:

Ահաւասիկ այն որոշումը որ Կառավարութիւնը տուած է իմիգրանտներու մասին:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի դործերի կառավարիչ Ա. Թօքմաճեան Մայիս 4, 1933 թուակիր նամակով մը հետեւեալ գրեց մեղ.—

«Ի պատասխան Զեր թիւ 541 գրութեան տեղեկացնում ենք.—

«1.- Զեր խնդրի հետեւանքով Ժողովրդական Կոմիսարների Խորհրդով որոշել է Նոր Խարբերդի բնակեցման ժամանակ նախապատուութիւն տալ Համա-Խարբերդցիական Միութեան մէջ մտնող Հայրենակցական Միութիւնների իմիգրանտներուն:

«2.- Համապատասխան միջոցներ ձեռք առնուած են հարաւոր ջանքով հեշտացնելու Խարբերդցիների ներգաղթը Խորհրդագային Հայաստան»:

Մեկ համար ներգաղթի խնդիրը խիստ մեծ կարեւորութիւն ունի:

Անշուշտ ամէնուս ալ փափաքն է որ այդպիսի գաղթականներ մտնեն Հայաստան եւ առ այդ կեղրոնը աշխատած է մասնաւորապէս այս շըրջանիս մէջ: Եւ անկասկած իր աշխատանքները պիտի բազմապատկէ այդ ուղղութեամբ ասկից վերջն ալ:

### 12.- ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳԻՒՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Համա-Խարբերդցիական Միութիւնը կազմուեցաւ 1926-ին, իրեն նպատակ զնելով Նոր Խարբերդը կառուցանել Խարբերդի Դաշտի անհատ Խարբերդցիներու նուէրներովը եւ գիւղական ընկերութիւններու նիւթական օժանդակութիւններովը:

Կեղրոնական Գործադիր Մարմինս այս նպատակէն բնաւչի շեղեցաւ:

Անխոտիր գիմեց այլեւայլ ոչ-օժանդակող գիւղական ընկերութիւններու որոնց հասցէները կրցաւ ձեռք ձգել:

Ուրախ ենք յայտարարելու որ անոնցմէ ոմանք բարեցակամ գտնուեցան եւ օժանդակեցին Միութեանս:

Ինչպէս նախապէս յիշեցինք, այս շըրջանիս մէջ մեզի միացան Փէրչէնճի եւ Մօրէնիկի Ուսումնասիրացները: Երբ կ'ըսենք «միացան», ըսել կ'ուզենք օժանդակող ընկերութիւններու թիւին վրայ աւելցան: Օժանդակող ընկերութիւններ տակաւին իրենց ուրոյն գոյութիւնը կը պահեն:

Կեղրոնը աշխատանք թափած է երկու ուրիշ գիւղական ընկերութիւններու մօտ նաեւ, Եղեգիկ եւ Կարմըրի Ընկերութիւններուն:

Անոնց հետ յարաբերութեան մտած է, եւ անոնք յօժարութիւն ցոյց տուած են լուսարանուելու եւ բացատրութիւններ ստանալու:

Մեծ յոյս ունինք որ այս ընկերութիւնները նաեւ շատ չանցած պիտի ուղեն իրենց վերապահուած պատուոյ աթոռները գրաւել միւս օժանդակող ընկերութիւններու շարքին:

Եւ սակայն ցանկը տակաւին լմնցած չէ: Կան հետեւեալ

գիւղերը որ բնաւ մասնակցած չեն Նոր Խարբերդի շինարարական գործին — Մէզրէ, Դատէմ, Էրթմընէկ, Խոխ, Վարդագիլ, Շնդիլ, Սօրսըրէ, Մուռի, Գայլու-Գօմք Եւայն, ինչպէս նաև Եղեգի եւ Կարմըրի:

Երեք գիւղական ընկերութիւններ, այն է Քոռիէ, Հապուակի և Այլու՝ յարմար տեսած են իրենց դրամները յատկացնել Նուլպարաշնի շինութեան:

Մեզի որքան սիրելի պիտի ըլլար անոնք եւս ունենալ մեր մէծ ընտանիքին մէջ:

Արդ Կեղրոնիս փափաքն է որ յարդելի պատկամաւորներ ջանան Միութեանս չօժանդակող վերոյիշեալ գիւղական ընկերութիւններու կեղրոնական վարչութեանց հասցէները գըտնել եւ դրկել գրասենեակը: Ոչ միայն այսքանը: Այլ ջանան պլրոպականտ ընել Համա-Խարբերդցիական Միութեան վիթխարի ձեռնարկը: Լոյս սփոելով է որ նախապաշարումները, եւ սիսալ հասկցողութիւնները պիտի վերնան: Որովհետեւ վատահ ենք որ երբ անոնք ունենան բաւականաչափ տեղեկութիւն եւ բացարութիւններ, անոնք պիտի կամենան իրենց գանձին մէկ կարեւոր մասը յատկացնել Նոր Խարբերդի շինութեան, զրաելով փողոց մը Նոր Խարբերդի մէջ իրենց գիւղին անուամբը եւ չենք մը կամ չենքեր այդ փողոցին վրայ:

Միութիւնս երբեք պիտի չը կասի անոնց դռները բաղխելն, այն յոյսովը որ ուշ կամ կանուխ այդ դռները լայն պիտի բացուին Միութեան առջեւ:

### 13.- ԴԻՑՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Արդ Կեղր. Գործադիր Մարմինս իր բարոյական եւ նիւթական համարատուութիւնը այսքան համառօտակի ներկայացընելով՝ իր պարտքը լիուլի կատարած պիտի ըլլայ, եթէ ընէ նաև մի քանի դիտողութիւններ եւ թելադրութիւններ:

Կեղր. Գործադիր Մարմինս կը խոստովանի որ 18 ամիսներու ըրջանին մեծկակ եւ աչքառու նիւթական արդիւնքներ սովահոված չէ Խարբերդցիներու այն հոծ բազմութենէն որ տարածուած են Աղլանտեանն Խաղաղական:

Թէ ինչո՞ւ, թուենք պատճառներէն ոմանք:

Ա.- Բուն իսկ Խարբերդցիներու շատութիւնը պատճառ մէկ որ համեմատական մեծ արդիւնքներ չը կրցինք ձեռք ձգել: Խարբերդցիներէ շատեր կը խորհին որ իրենց նուէր մը չտալր շատ մեծ տարբերութիւն մը պիտի չընէ: Կը խորհին որ

«ուրիշներ անպայման կուտան» , եւ այսպիսով ո՛չ մասնակից կ'ըլլան հանդանակութեանց եւ ոչ ալ անդամ կը գրուին մասնաճիղերու: Անոնք կ'ըսեն որ արդէն կը վերաբերին այս կամ այն կազմակերպութեան, եւ կ'ընեն իրենց զոհողութիւնները, եւ ուստի ուրիշները որ չեն վերաբերիր որեւէ կադարձակերպութեան, թող անոնք օժանդակեն Համա-Խարբերդցիներու մեծամասնութիւնը փոքրամասնութեան կը փոխուի, որովհետեւ ո՞ր մէկ Խարբերդցին է որ չը պատկանիր այս կամ այն կազմակերպութեան:

Բ.- Տնտեսական տագնապի օրերուն Կեդրոնական Գործադիր Մարմինի անդամներուն չափազանց մտահոգ եւ զրադացը ըլլալը իրենց անձնական գործերովը ուրիշ պատճառ մէկ թերացումի: Եթէ անոնք կարող ըլլային աւելի ժամանակ տալ Միութեան ձեռնարկներու յաջողութեան, զստահաբար աւելի արդիւնքներ կարելի պիտի ըլլար ապահովել: Արդարեւ անոնք զոհեցին այնքան որքան պարագաները կը թոյլատրէին:

Գ.- Ժողովուրդին սխալ գաղափարները կամ ըմբռնումները:

Շատեր կը պնդէն որ տնտեսական տագնապի օրերուն Նոր Խարբերդի գործերը յառաջ տարուելու են ուսումնասիրացներու պատրաստի դրամներովը, եւ դադար առնելու են անհատական դիմումները:

Շատեր բնաւ գաղափար մը չունին թէ ուսումնասիրացներ որքան դրամ արդէն տուած են եւ ուրիշներ ալ տալու վրայ են հայրենասիրական անկեղծ զգացումներով:

Անոնց նիւթական օժանդակութեան համագումարը \$28,-000 կը հաւասարի ուրիշ աղբիւրներէ եկած դրամներուն: Սախստ քաջալերական երեւոյթ մէկ: »

Սակայն մինչ իսկ եթէ այսօր անոնք յօժարին տալ իրենց զանձին ամբողջ գումարները, տակաւին Նոր Խարբերդի շինութեան բաւարար չէ եւ անհատ Խարբերդցիներ դարձեալ զոհելու են նուազ կամ առաւել չափով, եթէ Նոր Խարբերդի շինութիւնը յառաջ պիտի տարուի:

Միթէ իրաւունք ունինք Նոր Խարբերդը կոչել իրական աւան մը կամ քաղաք մը 8 յարկարաժիններով կամ ըսենք 16 յարկարաժիններով: Նոր Խարբերդը ածելէ զադար պիտի չառնէ, ինչպէս մանուկ մը ածելէ զադար չառներ:

Ուրիշ սխալ գաղափար մը եւս մերթ ընդ մերթ երեւան  
կուպայ:

Կ'ըսեն շատեր «քանի որ Ա. Հ. կառավարութիւնը այս-  
քան առատութեամբ պիտածէներ կը յատկացնէ նոր Խարբեր-  
դի շինութեան, ալ ի՞նչ պէտք կայ մեր քանի մը 1000 տոլար-  
ներուն»:

Ի՞նչո՞ւ այս խօսքը առաջին օրէն չըսինք:

Զէ՞ս որ Խարբերդիները իրենց պատույին վրայ խոստա-  
ցան հայկական կառավարութեան ընել իրենց լաւագոյնը,  
ևթէ նոր Խարբերդի հիմը դրուէք:

Հասկցողութիւնը այն էր որ Խարբերդին իր գաղթա-  
կաններուն համար պիտի շինէր տուններ եւ պիտի տար անոնց  
ապրուստի միջոցներ: Այդ հասկցողութիւնը ի զօրու է եւ  
վասահաբար ատկից պիտի չը խուսափին նախանձախնդիր  
հայրենասէր Խարբերդիներ:

Արդ կը տեսնէք թէ այս սխալ գաղափարները որքան կը  
դանդաղեցնեն վիթխարի ձեռնարկը եւ կը դժուարացնեն Մի-  
ութեանս գործերը:

Դ. Ուրիշ մէկ պատճառը մեր թերացումին է ժողովուր-  
դին հետաքրքրութեան պակսիւը:

Ժատեր մէծ եռանդով կը փարին նոր գաղափարի մը, նոր  
ձեռնարկի մը եւ նոր կազմակերպութեան մը: Ժամանակի ըն-  
թացքին հետաքրքրութիւնը կը պակսի, եւ գործը սկսողներ  
կը ստիպուին ահազին զոհողութիւններ ընելու եւ դժուարու-  
թեանց դէմ մաքառելու գործը շարունակելու համար:

Այդ շրջանին մէջէն է որ կ'անցնի արդ Միութիւնս: Հե-  
տաքրքրութեան պակսար:

Կեդրոնական Գործադիր Մարմինը այսպիսի խոշնդու-  
ներու եւ դժուարութիւններու մէջէն քալելով, եւ սակայն Մի-  
ութեան վարկը եւ պատիւը միշտ վեր բռնելով, այսօր կը  
ներկայանայ Պատգամաւորական ֆողովիդ եւ կ'ակնկալէ որ  
լսէ Ձեզմէ շինարար եւ օգտակար թելադրութիւններ:

Եւ սակայն Ձեր խորհուրդները ստանալէ առաջ կ'ուզէ ը-  
նել մի քանի թելադրութիւններ իր կողմէն:

14.- ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զեղ հաղորդեցինք տեղեկութիւններ, հաշիւներ, կատար-  
ուած գործեր եւ դիտողութիւններ:

Ի՞նչ են մեր թելադրութիւնները:

Առաջին թելադրութիւնը որ կ'ուզէ կեդրոնը ընել հետեւ-  
եալն է.

Խիստ մէծ կարեւորութիւն տալ 12,000 տոլարի հանգա-  
նակութեան, որովհետեւ անոր յաջողութիւնէն կախեալ է Նոր  
Խարբերդի կենսական պահանջներու գոհացում տալու խըն-  
դիրը:

Մէնք այս հանգանակութեան սկսեցինք պարզապէս Մաս-  
նաճիւղերու, Կրտսերաց լիկի եւ Օժանդակող Բնկերութիւն-  
ներու աջակցութեան ապաւիննելով:

Ակներեւ է որ հանգանակութիւնը լոկ յայտարարութիւն-  
ներով, թուուցիններով եւ նամակներով չէ որ պիտի յաջողի,  
այլ անհատական դիմումներով՝ կազմակերպեալ յանձնա-  
խումբերու միջոցաւ:

Առ հասարակ բոլոր հանգանակութիւնները յաջողած են  
անհատական դիմումներով եւ ընդհանրական ձեռնարկնե-  
րով: Եւ որպէս զի կարելի ըլլայ ընել այս անհատական դի-  
մումները եւ ընդհանրական ձեռնարկները, անհրաժեշտ է որ  
Մասնաճիւղերու թիւը շատնայ եւ Մասնաճիւղերու ներկայ  
կազմերը զօրանան:

Տեսնուեցաւ որ նորակազմ Մասնաճիւղեր արտաքոյ կար-  
գի եռանդ եւ կորով ցոյց կուտան:

Հին Մասնաճիւղերն են որ յոզնութեան նշաններ ցոյց կու-  
տան: Հարկ է անոնց մէջ նոր արիւն ներմուծել:

Պատգամաւորներու պարտականութիւնն է այս կէտերը  
մանրամասնօրէն բացատրել իրենց ընկերներուն:

Կեդրոնիս երկրորդ թելադրութիւնն է Միութիւնը իր  
սկզբնական միակ նպատակէն քնար չը շեղեցնել. այն է «Նոր  
Խարբերդը շինել»ու նպատակէն:

Մեղի յաճախ կուգան նամակներ, որոնցմով գրամական  
օգնութիւններ կը խնդրեն աղքատաներու, հիւանդներու, կըր-  
թական հաստատութիւններու, ուսանողներու եւ ներգաղթող-  
ներու համար:

Մեր պատասխանները եղած են ժխտական:

Ուրիշ պատասխան տալ կարելի էքր, քանի որ ունինք կանոնագիր որ բոլորովին կ'արգիլէ գանձին դրամը ուրիշ նպատակներու գործածելէն: Եթէ անոնց գոհացում տուած ըլլայինք, պէտք էր որ նոր Խարբերդի շինութիւնը դադար առնէր:

Այսպիսի դիմումներ ուղղուելու են բարեսկրական եւ կըրթական ընկերութիւններու եւ ոչ թէ զուտ շինարարական Միութիւններու: Ամէնուս պարտականութիւնն է այս կէտը բացատրել մեր շրջանակին մէջ գտնուող Հայրենակիցներուն:

Մեր երրորդ թելադրութիւնն է Քալիֆօրնիան անպայման կազմակերպել եւ այդ կազմակերպումի ծրագիրը եւ պիտածէն այս համաժողովին մէջ պատրաստել եւ քուէարկել:

Քալիֆօրնիոյ շրջանէն՝ Լոզ Անձէլըն է միակ քաղաքը որ Միութեանս օժանդակած է պատկառելի գումարով մը, §1964, մօտաւորապէս 2000 տոլարով:

Ֆրէզնոյէն ստացած ենք միայն 50 տոլար: Քալիֆօրնիացիները անձամբ պիտի չուզէին որ այս պարագան արձանագրուած մնար պատմութեան էջերուն վրայ: Անոնք այնքան նախանձախնդիր Հայրենասէրներ են որքան Արեւելքի Խարբերդցիները:

Այժմ մեր գիտողութիւնները եւ թելադրութիւնները լսելով, կը հաւատանք որ պատուարժան պատգամաւորներ պատրաստ են իրենց գիտողութիւնները եւ օգտակար թելադրութիւնները ներկայացնել համաժողովիս, որպէս զի բոլորս միասին կարող ըլլանք գծել նոր ուղի մը եւ նոր գործելակերպ մը յառաջիկայ շրջանի գործունէութեան համար:

### 15.- ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Արդ հրապարակաւ մեր շնորհակալութիւնները կը մտառացանենք Մասնաճիւղերու, Կրտսերաց Լիկի, Օժանդակող Ընկերութիւններու, եւ այն անհատներուն, որոնք որեւէ եղանակաւ Միութեանս օժանդակեցին եւ զայն քաջալերեցին:

Երախտապարտ ենք Երեւանի ներկայացուցիչներու ամբողջ կազմին, որոնք առանց վարձատրութեան կը հսկեն եւ կը զեկավարեն նոր Խարբերդի շինարարական գործերը: Քա-

ղաքացի Միսաք Մաղմանեանի եւ քաղաքացի Կարսապետ Տատեխեանի եւ իրենց գործակիցներուն:

Ամէնէն մեծ երախտիքը կը պարտինք Հայկական Կառավարութեան որ իր նիւթական եւ բարոյական օժանդակութիւնները առամադրեց Միութեանս մեծ ձեռնարկին այս տարի առաւել քան երբեք:

Արդ սոյն Տարեկան Տեղեկադիրը կը յանձնենք պատ համաժողովիդ լուրջ ուշադրութեան մաղթելով Զեր աշխատանքներուն կատարեալ յաջողութիւն:

Ի դիմաց ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴԻՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԿԵԴՐ. ԳՈՐԾ. ՄԱՐՄԻՆԻ

Ատենադպիր

Ատենապետ

ՅԱԲԵՐ. Մ. ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ

ՅՈՎ. ՀԱՆՆԵԼ ԾՈՎԻԿԻԱՆ



ՀՀ Ազգային գրադարան



NL0219889

9007

42. 872